

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ**

**ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ**

**YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY**

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

**ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
(ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴԿԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒԷ)**

**ИСТОРИЯ И КУЛЬТУРА
АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ
(СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ)**

**HISTORY AND CULTURE
JOURNAL OF ARMENIAN STUDIES
(COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES)**

**ԵՐԵՎԱՆ - ԵՐԵՎԱՆ - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԳՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2017**

*Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի և
Պատմության ֆակուլտետի գիտական խորհուրդների որոշմամբ*

Գլխավոր խմբագիր՝ պատմ. գիտ. դոկտ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**
Խմբագրական խորհուրդ՝

Արամ Մինոնյան - նախագահ (ԵՊՀ ռեկտոր, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.),
Աշոտ Մելքոնյան (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Արտակ Մովսիսյան**
(պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր), **Ալբերտ Ստեփանյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան**
(պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հայրապետ Մարգարյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Լևոն Չուգասյան**
(արվեստագիտ. դոկտ., պրոֆ.), **Իգիթ Ղարիբյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հենրիկ Աբրահամյան**
(պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան**
(պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Արման Եղիազարյան** (պատմ. գիտ. դոկտոր), **Հովիկ Գրիգորյան**
(պատմ. գիտ. թեկն., դոցենտ), **Մխիթար Գաբրիելյան** (պատմ. գիտ. թեկն., դոցենտ),
Էդգար Հովհաննիսյան (պատմ. գիտ. թեկն., դոցենտ), **Հակոբ Պետրոսյան** (բանասիր. գիտ. թեկն.):

Главный редактор: докт. ист. наук, проф. **Эдик Минасян**
Редакционная коллегия:

Արամ Սիմոնյան (председатель, ректор ЕГУ, членкор. АН РА, докт. ист. н., проф.), **Ашот Мелконян**
(академик АН РА, докт. ист. н., проф.), **Артակ Мовсисян** (докт. ист. наук, проф.), **Альберт Степанян**
(докт. ист. н., проф.), **Айк Аветисян** (докт. ист. н., проф.), **Айрапет Маргарян** (докт. ист. н., проф.),
Левон Чугасзян (докт. искусствовед. н., проф.), **Игит Гариббян** (докт. ист. н., проф.), **Генрих Абрамян**
(докт. ист. н., проф.), **Айказ Оганесян** (докт. ист. н., проф.), **Гамлет Петросян** (докт. ист. н., проф.),
Ашот Нерсесян (докт. ист. н., проф.), **Арман Егиазарян** (докт. ист. наук), **Овик Григорян** (канд. ист. н., доц.),
Мхитар Габриелян (канд. ист. н., доц.), **Эдгар Оганнисян** (канд. ист. н., доц.), **Акоп Петросян**
(канд. филолог. наук).

Editor-in-Chief- Doctor of Sciences, prof. **Edik Minasyan**
Editorial Board:

Aram Simonyan (Chairman, Rector of YSU, Corresp. member of NAS RA, Doctor of Sciences, prof.),
Ashot Melkonyan (Academician of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Artak Movsisyan**
(Doctor of Sciences, prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, prof.), **Hayk Avetisyan** (Doctor of
Sciences, prof.), **Hairapet Margaryan** (Doctor of Sciences, prof.), **Levon Chugaszyan** (Doctor of
Arts, prof.), **Igit Gharibyan** (Doctor of Sciences, prof.), **Henrik Abrahamyan** (Doctor of Sciences,
prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences,
prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, prof.), **Arman Yeghiazaryan** (Doctor of Sciences),
Hovik Grigoryan (PhD of History, associate professor), **Mkhitar Gabrielyan** (PhD of History,
associate professor), **Edgar Hovhannisyan** (PhD of History, associate professor), **Hakob Petrosyan**
(PhD in Philology).

ISSN 1829-2771 3

Արտակ Մովսիսյան

ԿԱՐԵՎՈՐ ԴԻՏԱՐԿՈՒՄ «ԴԱՆԻԵԼՅԱՆ» ՆՇԱՆԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ

Քանալի բառեր - Մեսրոպ Մաշտոց, «Դանիելյան» գիր, նախամաշտոցյան գրեր, Ղազար Փարպեցի, այբուբեն, հիերոգլիֆիկա, մեհենագիր, Սահակ Պարթև, Վռամշապուհ արքա:

Նախամաշտոցյան Հայաստանի գրի և դպրության հարցերին առնչվող ուսումնասիրություններում ամենքննարկվածը «Դանիելյան» նշանագրության խնդիրն է: Հայտնի է, որ երբ Մեսրոպ Մաշտոցը և կաթողիկոս Սահակ Պարթևը ներկայացան ու հայերենի այբուբենի ստեղծման իրենց մտադրությունը հայտնեցին Վռամշապուհ արքային, վերջինս նրանց հաղորդեց, որ տեղյակ է Հյուսիսային Միջագետքում պահպանված հայոց հին գրերի մասին¹¹: Դանիել անունով ասորի եպիսկոպոսից բերված գրանշանները, սակայն, չբավարարեցին խնդրի լիակատար լուծմանը, և Մաշտոցը ձեռնամուխ եղավ նոր գրային համակարգի ստեղծմանը:

Սակայն ի՞նչ էր իրենից ներկայացնում Դանիել եպիսկոպոսի պահպանած այդ համակարգը, քանի՞ նշանից էր բաղկացած, օգտագործե՞ց այն Մեսրոպ Մաշտոցն իր այբուբենը ստեղծելիս: Այս և նման հարցերն արդեն մի քանի հարյուրամյակ է զբաղեցնում են հայագետների ուշադրությունը: Դեռևս 1893 թ. Ս. Մալխասյանցն այս առթիվ գրում էր. «Հայոց գրի գիտի մասին և Դանիելյան նշանագիրների մասին զանազան բանասերներ այնքան բազմաթիւ կարծիքներ են յայտնել մեկը միւսին հակառակ՝ որ այսօր մարդ ինչ կարծիք էլ հայտնելու լինի այդ նիւթերի վերաբերութեամբ՝ դժար թէ բոլորովին նոր լինի այդ կարծիքը – նա հաւանօրէն արդէն ասուած է եղել ուրիշներից»¹²...

Այդուհանդերձ, մեր հետազոտության ընթացքում ուշադրություն դարձրեցինք կարևոր մի հանգամանքի վրա, որն աննկատ է մնացել նախկինում: Այն պարզաբանելու նպատակով նախ համառոտակի ներկայացնենք «Դանիելյան» նշանագրությանը վերաբերող հիմնական սկզբնաղբյուրները:

Մեսրոպ Մաշտոցի գլխավոր կենսագիր Կորյունի հաղորդումից պարզ է դառնում, որ գործածությունից դուրս եկած հայկական գրերը պահպանվել էին Դանիել անունով ասորի եպիսկոպոսի մոտ: Այդ մասին տեղեկացան Մեսրոպ Մաշտոցն ու Սահակ Պարթևը Վռամշապուհ արքայից, երբ նրան ներկայացրեցին հայալեզու և հայագիր դպրություն ստեղծելու իրենց ծրագիրը. «Յայնժամ պատմէր նոցա արքայն վասն առն ուրումն ասորոյ եպիսկոպոսի ազնուականի՝ Դանիէլ անուն կոչեցելոյ, որոյ յանկարծ ուրեմն գտեալ նշանագիրս աղփաբետաց հայերէն լեզուի»¹³:

Արքայի պատասխանը ոչ միայն կասկած կամ տարակուսանք չառաջացրեց Մեսրոպ Մաշտոցի ու Սահակ Պարթևի մոտ, այլ ընդհակառակը, նրանք ոգևորված սկսեցին հորդորել արքային՝ ժամ առաջ բերել տալ այդ նշանագրերը Հայաստան: Նշանագրերը բերվեցին, սակայն որոշ ժամանակ անց հանդվեցին, որ դրանք լիովին չեն բա-

¹¹ Տե՛ս Կորյուն, Վարք Մաշտոցի, բնագիրը, ձեռագրական այլ ընթերցվածներով, թարգմ., առաջաբանով և ծանոթագր. ի ձեռն Մ. Աբեղյանի, Ե., 1941; «Վարք Ս. Մեսրոպ Մաշտոցի», աշխատությամբ՝ Ա. Մաթևոսյանի, Ե., 1994, գլ. 2; «Մատենագիրք Հայոց», Ա. հատոր (այսուհետ՝ ՄՀ-Ա), Ե. դար, Անթիլիաս, 2003, էջ 236-237; Մովսիսի Խորենացույ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Մ. Աբեղյան եւ Ս. Յարութինեան., Տփլիս, 1913; Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, նմանահանութիւն 1913 թ. հրատարակութեան, լրացումները Ա. Սարգսեանի, Ե., 1991; Մովսէս Խորենացի, Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ստ. Մալխասյանի, Ե., 1990, գիրք Բ, գլ. ԾԲ; «Մատենագիրք Հայոց», Բ. հատոր (այսուհետ՝ ՄՀ-Բ), Ե. դար, Անթիլիաս, 2003, էջ 2080; «Ղազարայ Փարպեցույ Պատմութիւն Հայոց եւ Թուրք առ Վահան Մամիկոնեան», աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան եւ Ստ. Մալխասեան, Տփլիս, 1904; Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն, քնն. բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Մալխասյանցի, աշխ. թարգմ. և ծանոթ. Բ. Ուլուբաբյանի, Ե., 1982, դրվագ Ա, գլ. Ժ; ՄՀ-Բ, էջ 2212-2215:

¹² Տե՛ս Մալխասյանց Ս., Հայոց գիրը (գրայնություն), «Տարագ» շաբաթաթերթ, Թիֆլիս, 1893, թիվ 3, էջ 41:

¹³ «Այն ժամանակ [Վռամշապուհ] արքան պատմեց նրանց մի մարդու՝ Դանիել անունով մի ազնվական ասորի եպիսկոպոսի մասին, որ հանկարծ գտել է հայերեն լեզվի ավփաբետների նշանագրերը»: Կորյուն, գլ. 2; ՄՀ-Ա, էջ 236-237:

վարարում խնդրի լուծմանը. «Իսկ իբրև ի վերայ հասեալ, թէ չեն բաւական նշանագիրքն՝ ողջ ածել զսիւղոբայս զկապս հայերէն լեզույն, մանավանդ զի եւ նշանագիրքն իսկ յայլոց դպրութեանց թաղեալք եւ յարուցեալք դիպեցան, յետ այնորիկ դարծեալ կրկին անգամ ի նոյն հոգս դառնային, եւ նմաին ելս խնդրէին ժամանակս ինչ»¹⁴:

Այնուհետև Մաշտոցն անձամբ մեկնեց Եդեսիա, հանդիպեց Դանիել Ասորուն, բայց ավելին չստանալով՝ շարունակեց որոնումներն ու աստվածային տեսիլքով ստացավ նոր այբուբենը, որ Կորյունը բնութագրում է իբրև հայերեն լեզվի «նորոգ եւ սքանչելի» նշանագրեր¹⁵:

Մովսես Խորենացին, անդրադառնալով նույն դրվագին, Դանիել եպիսկոպոսի մոտ պահպանված գրերը կոչում է «զվաղնջուցն գրեալ»¹⁶ նշանագիր տառից»¹⁷:

Նույնն է հավաստում նաև Ղազար Փարպեցին, երբ ներկայացնում է Մեսրոպ Մաշտոցի խորհրդածությունները հայագիր և հայալեզու դպրության ստեղծման մասին. «Զայս ի բազում ժամանակս զմտաւ ածեալ երանելի առն Մաշտոցի, եւ փղծկացեալ յանձն իւր, մանաւանդ թէ զոն նշանագիրք հայերէն լեզուոյս, որով հնար է՝ ինքեան ձայնիւ, եւ ոչ մուրացածոյ բարբառով, շահել զոգիս արանց եւ կանանց առ հասարակ յամենայն եկեղեցիս բազմութեանն»¹⁸:

Հատկանշական է Ղազար Փարպեցու ձևակերպումը՝ կապված Մեսրոպ Մաշտոցի այբուբենի հետ, երբ նա խորհուրդ է տալիս ընթերցողին մանրամասների համար կարդալ Կորյունի երկը. «Եւ զայս թէ կամիցի ոք զիտել հաւաստեալ՝ ի պատմութենէ զրոյց առն ցանկայի Կորեան, աշակերտի նորին երանելւոյն Մաշտոցի, կարդացեալ տեղեկացի զվարս կենաց նորա եւ զիւր հայերէն նշանագրացն...»¹⁹: Ղազար Փարպեցու «զիւր հայերեն նշանագրացն» արտահայտությունն ինքնին ցույց է տալիս, որ եղել է մեկ այլ, ոչ մաշտոցյան (մինչմաշտոցյան) հայերեն նշանագրային համակարգ:

Ղազար Փարպեցու հետագա շարադրանքում ավելի է ընդգծվում, որ Մեսրոպ Մաշտոցը կարգավորել և կատարելագործել է հայոց հնագույն գրահամակարգը²⁰: Հայոց աշխարհիկ և հոգևոր դասերի վերնախավի ներկայացուցիչները (Վռամշապուհ արքայի և Մեսրոպ Մաշտոցի գլխավորությամբ) դիմում են Սահակ Պարթևին, որպեսզի նա հանձն առնի Աստվածշնչի հայերեն թարգմանության դժվարին գործը: Այդ ժամանակ ավագ քահանաների՝ Սահակ Պարթև կաթողիկոսին ուղղված խոսքում նշվում է, որ հայոց նոր այբուբենը «զվաղնջուցն գրեալ» գրերն էին, որոնք չէին կիրառվում և Մեսրոպ Մաշտոցը դրանք կարգավորեց աստվածային շնորհով. «Մեք որ կամքս առաջի քր, հանդերձ երանելեան Մաշտոցի, զոր զարթոյց աստուածայինն շնորհ ի ցանկութիւն

¹⁴ «Իսկ երբ հասկացան, որ այդ նշանագրերը բավական չեն հայերեն լեզվի սիղոբաները - կապերն ամբողջությամբ արտահայտելու համար, - մանավանդ որ նշանագրերն էլ իսկապես ուրիշ դպրություններից թաղված ու հարություն առած հանդիպեցին, - դարձյալ երկրորդ անգամ նույն հոգսի մեջ ընկան և մի քանի ժամանակ ելք էին փնտրում դրան»: Կորյուն, գլ. 2; ՄՀ-Ա, էջ 237: Կորյունի այս հատվածը, հատկապես՝ «յայլոց դպրութեանց թաղեալք եւ յարուցեալք» արտահայտությունը, գրականության մեջ բազմաթիվ ու բազմապիսի մեկնաբանությունների տեղիք է տվել:

¹⁵ Տե՛ս Կորյուն, գլ. 2-Ը; ՄՀ-Ա, էջ 236-238:

¹⁶ Չեռագրերը պահպանել են և՛ «գտեալ», և՛ «գրեալ» տարբերակները: Տե՛ս Մովսես Խորենացի, 1913 (1991), էջ 326; ՄՀ-Բ, էջ 2080:

¹⁷ Մովսես Խորենացի, գիրք Գ, գլ. ԾԲ; ՄՀ-Բ, էջ 2080:

¹⁸ «Եվ երանելի այր Մաշտոցն այդ մասին երկար ժամանակ խորհում էր ու լալիս իր ներսում. չէ՞ որ կային հայերեն լեզվի նշանագրեր, որոնցով հնարավոր է սեփական ձայնով և ոչ թե մուրացածո լեզվով եկեղեցիներում շահել տղամարդկանց ու կանանց և առհասարակ բազմության սրտերը»: Ղազար Փարպեցի, դրվագ Ա, գլ. Ժ; ՄՀ-Բ, էջ 2212:

¹⁹ Նույն տեղում, դրվագ Ա, գլ. Ժ, 4: ՄՀ-Ա, էջ 2212:

²⁰ Ղազար Փարպեցու ձեռագրերից մեկում նշանակալի կատարվել է ներմուծում Մովսես Խորենացու «Հայոց պատմության» 1695 թ. Ամստերդամի հրատարակությունից (հանգամանորեն տե՛ս Տէր-Մկրտչեան Գ., Ղազար Փարպեցու ձեռագրերը, «Արարատ», Էջմիածին, 1901, թիւ ԺԱ և ԺԲ, էջ 542-549): Դանիելի մոտից գրանշանները բերելու և Վռամշապուհ արքային, Սահակ Պարթևին ու Մեսրոպ Մաշտոցին հանձնելու դրվագից հետո ավելացված է Խորենացու պատմությունը Մեսրոպ Մաշտոցի տեսիլքի մասին: Այդ հատվածը, բնականաբար, դուրս է թողնվում քննական բնագրից՝ բերվելով միայն տողատակի ծանոթագրություններում: Տե՛ս Ղազար Փարպեցի, 1904, էջ 15; ՄՀ-Բ, էջ 2213: Ղազար Փարպեցու երկի աշխարհաբար թարգմանության հեղինակ Բ. Ուլուբաբյանը, ինքը ևս նշելով, որ դա ներմուծում է Մովսես Խորենացուց, այնուամենայնիվ, այդ հատվածը թողել է բուն տեքստում՝ տալով դրան իր բացատրությունը ծանոթագրության մեջ: Տե՛ս Ղազար Փարպեցի, 1982, էջ 32-35, ծանոթագրությունը՝ էջ 490-491: Նման մոտեցումն արդարացված է, քանի որ դա հակասության մեջ է մտնում Ղազար Փարպեցու բնագրի շարունակության հետ, ուր նա Մեսրոպ Մաշտոցին ներկայացնում է իբրև վաղնջուց գրված նշանագրերը կարգավորող: Տե՛ս Ղազար Փարպեցի, դրվագ Ա, գլ. ԺԱ; ՄՀ-Բ, էջ 2214-2215:

այս կարգել գվաղընջուցն գրեալ շարագիրս տառիցն, զորս ոչ ուրուք էր հոգացեալ արկանել ի կիր... Եւ ուսուցիչքն հանելով յոգւոցն եւ հառաչելով՝ զղջանային զսնոտի ջանն իւրեանց, յորում ոչ զոք յուսումնասէր ժողովելոցն տեսանէին աւզտեալ ի վարդապետութենէ՝ հոգեւոր խրատուցն, որ է կերակուր եւ պարարումն իմաստնախնդիր անձանց. մինչեւ գտաւ գիր եւ աջողելով Քրիստոսի եկեալ յաճումն տակաւին զաւրանայ»¹:

Ավելորդ չենք համարում այստեղ մեկ անգամ ևս հիշելը, որ Կորյունը մաշտոցյան գրանշանները բնութագրում է իբրև հայերեն լեզվի «նորոգ եւ սքանչելի» նշանագրեր²: Կարծում ենք, որ «նորոգ» (և ոչ թե «նոր») եզրույթի ընտրությունը պատահական չէ:

Վաղուց նկատվել է, որ հինգերորդ դարի հայ պատմիչներից ոչ մեկը չի նշում Դանիելի մոտ պահպանված հին հայկական գրանշանների թիվը: Հետագա դարերում դրանց վերագրվել են տարբեր քանակություններ (17, 22, 24, 29), որոնք կապվում են փյունիկյան, արամեական, ասորական, հունական այբուբենների հետ կամ՝ այն մտքի, որ Մեսրոպ Մաշտոցը ստեղծել է միայն ձայնավոր հնչյունների նշանները³:

Իսկ ո՞րն է պատճառը, որ հինգերորդ դարի պատմիչները, որոնք պետք է իրենց աչքով տեսած լինեին այդ նշանները (մանավանդ Կորյունը, որ Մեսրոպ Մաշտոցի ավագագույն աշակերտներից էր), չեն նշում Դանիելի մոտ պահպանված գրանշանների թիվը:

Այստեղ առաջին անգամ ցանկանում ենք առաջ քաշել տեսակետ՝ հիմնված Ղազար Փարպեցու կարևոր մի հաղորդման վրա: Փարպեցին օգտվել է Կորյունի անխաթար բնագրից, որը սկզբնական անաղարտ վիճակով մեզ չի հասել⁴, և Մաշտոցի մասին իր տեղեկությունները ստացել է նաև նրա աշակերտներից ու գործակիցներից: Ուստի նրա հաղորդումներն ունեն բացառիկ կարևորություն:

Ղազար Փարպեցին տեղեկացնում է, որ Դանիելից նշանագրերը ստանալով՝ Վռամշապուհ արքան, Սահակ Պարթևն ու Մեսրոպ Մաշտոցը մեծ ուրախություն ապրեցին, ինչից հետո Մաշտոցը ձեռնարկեց այդ նշանագրերն ըստ հունարենի հնչյունական դասավորության կարգավորելու գործին. «Եւ այսպէս դիպեալ գիւտի նշա-

¹ «Մենք, որ քո առաջ կանգնած ենք երանելի Մաշտոցի հետ միասին, որի մեջ աստվածային շնորհը ցանկություն արթնացրեց կարգավորել վաղնջուց գրված նշանագրերը, որոնց կիրառությունը ոչ ոք չէր հոգացել... Ուսուցիչները հոգոց հանելով ու հառաչելով ափսոսում էին իրենց զուր ջանքերի համար: Ուսումնասեր հավաքվածներից ոչ մեկն օգուտ չէր ստանում հոգևոր խրատների վարդապետությունից, որն իմաստասեր մարդկանց սնունդն է ու զորացողը, մինչև գտնվեց գիրը և աճելով դեռևս զորանում է Քրիստոսի օգնականությամբ»: Ղազար Փարպեցի, դրվագ Ա, գլ. ԺԱ; ՄՀ-Բ, էջ 2214-2215:

² Կորյուն, գլ. Ը; ՄՀ-Ա, էջ 236-238:

³ Այդ տեղեկությունների և դրանց հնարավոր մեկնաբանությունների մասին ամփոփ կերպով տե՛ս Աճառյան Հ., Հայոց գրերը, Ե., 1984, էջ 441-460: Մասնավորապես, Ստեփանոս Տարոնեցի Ասողկն այդ նշանների թիվը համարում է 29: Տե՛ս «Ստեփանոսի Տարոնեցույ Ասողկան Պատմութիւն տիեզերական», Ս. Պետերբուրգ, 1885, Երկրորդ հանդես, գլ. Զ, էջ 139-140; «Մատենագիրք Հայոց», ԺԵ. հատոր, Ժ. դար, գիրք Բ., Անթիլիաս, 2011, էջ 731), Սամուել Անեցին և Կիրակոս Գանձակեցին ստույգ թիվ չեն նշում, բայց շեշտում են, որ մաշտոցյան այբուբենի հիմքում ընկել են Դանիելի մոտից բերած նշանագրերը (Տե՛ս Սամուելի քահանայի Անեցույ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 68; Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Ե., 1961, էջ 25-26), Վարդան Արևելցին՝ 22 (Տե՛ս «Մեծին Վարդանայ Բարձրբերդույ Պատմութիւն տիեզերական», ի լոյս ընծայեաց Մ. Էմին, Մոսկվա, 1861, գլ. ԻԵ, էջ 70), Կարապետ Սասնեցին՝ 22 (Տե՛ս «Կարապետ Սասնեցույ Ներբողեան յաղագս վարուց եւ մահուան սրբոյ վարդապետին Մեսրոբայ», աշխատութեամբ Մեսրոպ Տէր Մովսէսեանի, Վաղարշապատ, 1897, էջ 41, 43-44), Դավիթ Անհաղթին վերագրված մի հանելուկում՝ 24 (Տե՛ս Эминь Н.О., Объ Армянскомъ алфавите.- Исследования и статьи Н.О. Эмина по армянской мифологии, истории и истории литературы (за 1858-1884 гг.), М., 1896, էջ 214; Աճառյան Հ., նշվ. աշխ., էջ 442), «Յաղագս սրբոց վարդապետաց Հայոց Մովսէսի և Դավթի» անվավերական գրվածքում և «Ոսկեփորիկ» ժողովածուների ձեռագիր երկու մատյաններում՝ 29 (Տե՛ս Աճառյան Հ., նշվ. աշխ., էջ 442), «Վարդանագիրք» կոչվող մատյանում՝ 17 (Տե՛ս Յարութիւնեանց Ի., Հայոց գիրը, Թիֆլիս, 1892, էջ 267-269; Աճառյան Հ., նշվ. աշխ., էջ 446-447), «Յայսմաւորքում»՝ 24 (Տե՛ս Զարբհանալեան Գ., Հայկական հին դպրութեան պատմութիւն, երրորդ տպագրութիւն, յաւելուածոք եւ փոփոխութեամբք, Վենետիկ, 1897, էջ 45), «Գանձարան» կոչվող ժողովածուի մեջ՝ 29 (Տե՛ս Յարութիւնեանց Ի., նշվ. աշխ., էջ 263-265; Զարբհանալեան Գ., նշվ. Աշխ., էջ 45-46; Աճառյան Հ., նշվ. աշխ., էջ 442-443), «Կայսերաց գրքում»՝ 29 (Տե՛ս Զարբհանալեան Գ., նշվ. աշխ., էջ 42; Յարութիւնեանց Ի., նշվ. աշխ., էջ 263-267; Աճառյան Հ., նշվ. աշխ., 1984, էջ 442-443) և այլն:

⁴ Կորյունի բնագրի կարևոր մի սրբագրում ընդամենը մի քանի տարի առաջ արեց Ա. Մաթևոսյանը, ում կարծիքով մի քանի էջերի վերաբերող բնագրային խաթարումը պետք է տեղի ունեցած լիներ դեռևս V դ. (Տե՛ս Կորյուն, Վարք Ս. Մեսրոպ Մաշտոցի, աշխատությամբ՝ Ա. Մաթևոսյանի, Ե., 1994, սրբագրման հանգամանակի բացատրությունը՝ էջ 148-172, այդ ձգբարմամբ է Կորյունի բնագիրը տեղ գտել «Մատենագիրք Հայոց» մատենաշարի Ա հատորում):

նագրացն՝ ձեռն ի գործ արկանէր երանելին Մաշտոց, յերհարելով զնա սուրբ հայրապետին Հայոց Սահակայ, դիրահնար ճանապարհ ցուցանելով կարգադրութեան գրեւորս եւ հեգեմային ուղղաձայնութեան. կալով նմա աւզնականս եւ այլ արս բանիբունս եւ մտացիս ի քահանայիցն Հայոց, որք էին առ սակաւ մի եւ նոքա, որպէս երանելին Մաշտոց, մերձաւորեալք ի յունարէն հեգեմայինսն. որում առաջնոյն անուն էր Յոհան՝ ի գաւառէն Եկեղեաց, եւ երկրորդին Յովսէփ՝ ի Պաղանական տանէն, եւ երրորդին Տէր՝ ի Խործենոյ, եւ չորրորդին Մուշէ՝ ի Տարաւնոյ: Որոց աւզնելովն զարէր երանելի Մաշտոց, հանդիպեցուցանէր զհայերէն աթուրայսն ըստ կարգման սիւլովբայիցն Յունաց, ստէպ հարցմամբ եւ ուսանելով ի սուրբ կաթողիկոսէն Սահակայ զաթուրայիցն զաղափար, ըստ անսայթաբութեան յունին»¹:

Եթե Դանիելից ստացված նշանագրերը լինեին 2-3 տասնյակ նշաններ, ապա Մեսրոպ Մաշտոցը, որ մանուկ հասակից տիրապետում էր հունարենին և եղել էր արքունի դպիր, առանց դժվարության մեկ էջի վրա անմիջապես դրանք կդասավորեր՝ ըստ հունական այբուբենի հերթականության: Սակայն այդ գործի համար Սահակ Պարթևը նրան տվեց չորս օգնականներ, ընդ որում, հինգ հոգուց բաղկացած խումբն աշխատելիս, երբ դժվարության էր հանդիպում, դիմում էր հենց իրեն՝ կաթողիկոսին:

Ուշադրության է արժանի նաև այն փաստը, որ համապատասխանեցվում էին ոչ թե տառերը, այլ՝ վանկերը («զհայերէն աթուրայսն ըստ կարգման սիւլովբայիցն Յունաց»): Նշանակում է՝ **Դանիել եպիսկոպոսի մոտ պահպանվածը ոչ թե 2-3 տասնյակ տառանշանից բաղկացած այբուբեն էր, այլ շատ ավելի բազմանիշ և բարդ համակարգ (թերևս՝ բառավանկային կամ վանկային), որի՝ ըստ հունարենի այբուբենի դասավորելու բարդ աշխատանքն իրականացրեց հինգ հոգիանոց հանձնախումբը՝ Մեսրոպ Մաշտոցի գլխավորությամբ, երբեմն օգնություն ստանալով նաև կաթողիկոսից:**

Այս փաստին դեռևս 1907 թ. ուշադրություն է դարձրել Տ. Սահակյանը. «24 տառի առջեւ տառեր շարելը՝ (մեկ էջով ցանկ մ'ջօրհնելը) ինչ նշանակութիւն կրնայ ունենալ՝ որ բոլոր պատմիչները յիշատակեն և այնքան հանդիսաւորութեամբ, այնքան յուզված... Որքան անտեղի է կարծել, թէ չորս հոգւոյ յանձնաժողով մը կազմուեր էր (Յովհան, Յովսէփ, Տէր եւ Մուշէ) հայերէն տառերը յունարէնին առջեւ շարելու համար ! և բաց աստի յոյն տառերու մասին ստէպ հարցնէին և սովորէին Ս. Սահակէն... Դարձեալ Σύλλαβος «վանկ» կը նշանակէ և հայ տառերը մի առ մի յոյնին առջեւ շարելու համար՝ ոչ մեկ պատճառ կար վանկերու վրայ խօսելու»²: Հեղինակը ենթադրում է, որ Մաշտոցն իր չորս աշակերտների հետ և Սահակ Պարթևի օգնությամբ ստեղծել է հունարեն-հայերեն բառարան: Գեղեցիկ լինելով հանդերձ՝ ենթադրությունը համոզիչ չէ, քանի որ այդ դեպքում բառարանը կհիշատակվեր, մանավանդ, կապված Աստվածաշնչի թարգմանության հետ: Մինչդեռ թե՛ Մովսես Խորենացին, թե՛ Ղազար Փարպեցին հստակ նշում են Դանիելի մոտ պահպանված նշանագրերն ըստ հունական այբուբենի հերթականության դասավորելու մասին:

Փարպեցու հաղորդման շնորհիվ հասկանալով, որ Դանիել Ասորու մոտ պահպանվածը ոչ թե 2-3 տասնյակ տառանշանից բաղկացած այբուբեն էր, այլ շատ ավելի բազմանիշ ու բարդ համակարգ (հավանաբար, բառավանկային կամ վանկային), կարող ենք գտնել նաև մեր հարցի պատասխանը, թե ինչու 5-րդ դ. պատմիչները, որոնք պետք է իրենց աչքով տեսած լինեին այդ նշանները, չեն նշում այդ գրահամակարգի նշանների թիվը:

¹ «Եվ, այսպես, հայոց նշանագրերը գտնելով՝ երանելի Մաշտոցը գործի ձեռնարկեց: Հայոց սուրբ հայրապետ Սահակն էլ գործը հարմարեցնելով, տառերի դասավորության և հնչյունային ուղղաձայնության դյուրին ճանապարհ ցույց տալով, ինչպես նաև հայոց քահանաներից նրան օգնականներ կարգելով ճարտարաբան ու խելամիտ մարդկանց, որոնք, երանելի Մաշտոցի պես, քիչ գիտեին հունարեն հնչյունաբանությունը: Նրանցից առաջինի անունն էր Հոհան՝ Եկեղյաց գավառից, երկրորդինը՝ Հովսէփ՝ Պաղանական տնից, երրորդինը՝ Տէր՝ Խործյանքից, չորրորդինը՝ Մուշէ՝ Տարունից: Նրանց օգնությամբ երանելի Մաշտոցը կարողացավ հայերեն վանկերը կարգավորել-դասավորել ըստ հունարենի հնչյունային-վանկական անսայթաբ դասավորության՝ հաճախ հարցնելով ու սուրբ Սահակ կաթողիկոսից իմանալով հունարենի վանկերի օրինակները»: Ղազար Փարպեցի, դրվագ Ա, գլ. Ժ: ՄՀ-Բ, էջ 2214: Դանիելի մոտ պահպանված գրանշաններն ըստ հունական այբուբենի հերթականության դասավորելու մասին հաղորդում ունի նաև Մովսես Խորենացին (գիրք Գ, գլ. ԾԲ), ով սակայն, դասավորման հեղինակ է համարում հենց Դանիելին:

² Սահակյան Կ., Գրոց գիւտը, «Բազմավէպ», 1907, N 9-10, էջ 441-443:

Սեպագիր և մեհենագիր (հիերոգլիֆ) գրահամակարգերի յուրաքանչյուր մասնագետ հեշտությամբ կարող է գտնել այդ հարցի պատասխանը: Հայտնի է, որ բառավանկային համակարգերում միևնույն նշանը կարող է գործածվել և՛ որպես բառ-գաղափարանշան՝ ունենալով մեկից ավելի իմաստ, և՛ հնչյունային նշան՝ ակրոֆոնիայի (սկզբնահնչման) կանոնի համաձայն ցույց տալով այդ բառ(եր)ի առաջին վանկ(եր)ը, և՛ դետերմինատիվ (որոշարկիչ) ցույց տալու համար այլ բառերի (հիմնականում՝ հատուկ անունների) ով կամ ինչ լինելը: Սա շփոթ է առաջացրել. երեք տեսակի և հաճախ բազմաբանակ կիրառություն ունեցող մեկ նշանը քանի միավոր պետք համարել՝ մե՞կ, երկո՞ւ, հի՞նգ, տա՞սը...

Հեռու չգնալու համար բերենք մեկ օրինակ Հայաստանում կիրառված բառավանկային գրահամակարգերից մեկից՝ Վանի թագավորության սեպագրությունից, որն, ի դեպ, լինելով միջագետքյան սեպագրի բարեփոխված տարբերակը, խիստ կրճատել էր բազմիմաստությունը¹: Միևնույն ddAd սեպագիրը նշանակում էր և՛ «աստված», և՛ «երկինք», և՛ «երկնային», և՛ «առ» վանկը, և՛ դիցանուններից առաջ դրվող դետերմինատիվ-որոշարկիչ էր՝ «աստված» նշանակությամբ:

Համատարած այբուբենագրության դարաշրջանում, երբ արդեն մոռացվել էին բառավանկային սեպագիր և մեհենագիր (հիերոգլիֆ) համակարգերը², այսպիսի բազմիմաստ-բազմանշանակությունն, անշուշտ, պետք է շփոթ առաջացներ: Այդ իսկ պատճառով հինգերորդ դարի մեր պատմիչները չեն հիշատակում այդ գրանշանների թիվը:

Միևնույն՝ համատարած այբուբենագրության դարաշրջանով պետք է բացատրել նաև դանիելյան նշանագրերի որակումն իբրև «*նշանագիրս աղվաբետաց հայերէն լեզուի*», այսինքն՝ հայերենի այբուբենի նշանագրեր: Հինգերորդ դարում բառավանկային սեպագիր և մեհենագիր համակարգերը մոռացության էին տրվել (դրա խոսուն վկայություններից մեկը Մովսես Խորենացու՝ Վանի ժայռի սեպագրերը չհասկանալն է): Եվ «*աղվաբետ* (այբուբեն)» հասկացությունը կիրառվում էր ավելի լայն՝ «գիր, գրային համակարգ» նշանակությամբ:

Այդուհանդերձ, թեկուզ ենթադրության մակարդակով, փորձենք պատասխանել մի հարցի՝ ինչո՞ւ են հետագա դարերի մատենագիրները Դանիել եպիսկոպոսի մոտ պահպանված գրերը համարում այբուբեն: Կարո՞ղ է այդ պատկերացումն ունենալ որևէ պատմական հիմք:

Այս տեսանկյունից հատուկ ուշադրության է արժանի Տրդատ Գ արքայի և Սուրբ Սարգսի մասին պատմող եթովպական բնագիրը: Բանահյուսական տարրերով հարուստ այդ բնագրում պատմվում է, որ Տրդատ Գ-ի օրոք հայոց լեզվի համար ստեղծվել է 22 տառանոց այբուբեն, որի հեղինակները երկու սուրբ հայ հոգևորականներ էին՝ Թադեոս ու Մարտիրոսը³:

Տրամաբանական է, որ Տրդատ Գ-ի ժամանակ փորձ արվեր ստեղծելու այբուբեն հայերենի համար. չէ՞ որ հայ ժողովրդին հունարենով և ասորերենով քարոզչության անարդյունավետությունը հասկանալու համար ոչ թե մեկ դար, այլ մեկ ամիսն էլ բավական էր: Այս դեպքում, իհարկե, պետք է պատասխանել հարցին, թե ինչո՞ւ հայկական աղբյուրներում ոչինչ չի ասվում այս այբուբենի ստեղծման մասին: Կարելի է են-

¹ Վանի թագավորության սեպագրության նշանացանկը տե՛ս König F., Handbuch der chaldischen Inschriften, I, Graz, 1955, աղ. 103-105; Меликишвили Г.А., Урартские клинообразные надписи, М., 1960, էջ 36-44; Дьяконов И., Урартские письма и документы, Л., 1963, էջ 96-120; Մովսիսյան Ա., Նախամաշտոցյան Հայաստանի գրային համակարգերը, Ե., 2003, էջ 369-385:

² Հիշենք, որ Մովսես Խորենացու համար Վանի ժայռին փորագրված սեպագրերը միանգամայն անհասկանալի էին: Տե՛ս Մովսես Խորենացի, գիրք Ա, գլ. ԺԶ:

³ Տե՛ս Տաղաւարեան Ն., Ծագումն հայ տառից, Վիեննա, 1895, էջ 37 (բերվում է միայն համառոտ բովանդակությունը); Պատմութիւն Տրդատայ (Եթովպիարեն), (Որնե Բասսեի ֆրանսերեն վերծանությունից թարգմանությունը Եփրեմ Ապլեանի), «Բազմավէպ», 1895, էջ 75-76; Պատմություն Հայոց արքա Տրդատի (Թերթագի) մասին (Յոհաննես Բախմանի գերմաներեն վերծանությունից թարգմանությունը Հասմիկ Մելքոնյանի), Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 2, Ե., 2011, էջ 58-60: Կարելի է ենթադրել, որ առաջին սրբի անունը կապվում է Թադեոս առաքյալի հետ, կամ՝ երկու սրբերին նույնացնել Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի հետ: Սակայն նման ենթադրությունները քիչ հավանական են: Բանն այն է, որ եթովպական եկեղեցին գործուն կապի մեջ է եղել հայոց եկեղեցու հետ, և Մեսրոպ Մաշտոցը պետք է քաջաձանոթ լիներ եթովպական հոգևորականությանը:

թաղրել, որ այբուբենը ստեղծողները պատկանել են մի ուղղության, որն արգելվել է պաշտոնական եկեղեցու կողմից, իսկ նրանց հետ կապված ամեն բան մոռացության է դատապարտվել¹: Բոլոր դեպքերում, եթովպական բնագիրը թույլ է տալիս ենթադրելու IV դ. սկզբին հայկական այբուբեն ստեղծելու (կամ առնվազն նման փորձի) մասին, որի հիշողությունն էլ հետագա դարերում կարող էր պահպանված լինել և արտահայտվել «Դանիելյան» գրահամակարգը այբուբեն համարելու պատկերացման մեջ:

Ամփոփելով՝ կարող ենք եզրակացնել, որ Դանիել եպիսկոպոսի մոտ պահպանված հին հայկական գրահամակարգը ոչ թե 2-3 տասնյակ նշանից բաղկացած այբուբեն էր, այլ՝ հայկական մեհենագրային համակարգը, որի գրանշանների թիվն անցնում էր երկու հարյուրից²: Այն չէր կարող բավարարել 5-րդ դ. համատարած այբբենագրության պահանջները, ուստի Մեսրոպ Մաշտոցը շարունակելով պրպտումները՝ ստեղծեց 36 տառանոց հանճարեղ այբուբենը:

Артак Мовсисян, Важное замечание по поводу «Данииловских» письмен,- Армянские историки 5-го века рассказывают о до-маштоцовских армянских письменных знаках, которые сохранились у епископа Даниила в городе Эдесса. Многие арменологи пытались понять - что это за письменные знаки? До сих пор нет убедительного решения этой проблемы.

Основываясь на важных сообщениях Лазаря Парпеци, автор приходит к выводу, что древняя система письма, сохранившаяся у епископа Даниила, была не алфавитом, а древнеармянской дохристианской иероглифической системой («Мехенагир»), состоящая из более чем 200 знаков.

Ключевые слова: Месроп Маштоц, «Данииловские» письмена, до-маштоцовские армянские письмена, Лазар Парпеци, алфавит, иероглифическая система, Мехенагир, Саак Партев, царь Врамшапух.

Artak Movsisyan, An important remark on “Danielian” scripts,-The historians of the 5th century informed about the pre-Mashtotsian Armenian writing system preserved by bishop Daniel in Edessa. Many armenologists tried to understand – what script is that? Up to this day there is no convincing solution of this problem.

Based on Ghazar (Lazar) Parpetsi’s important data, the author concludes that ancient writing system, preserved by bishop Daniel, was not an alphabet, but the ancient Armenian pre-Christian hieroglyphic system (“Mehenagir”) consisting of more than 200 signs.

Key words: Mesrop Mashtotz, “Danielian” script, pre-Mashtotzian Armenian writing system, Ghazar (Lazar) Parpetzi, alphabet, hieroglyphic system, Mehenagir, Sahak Partev, King Vramshapuh.

¹ Այդպիսին էր, օրինակ, արքունիկների քրիստոնեա-գնոստիկական ուղղությունը Հայաստանում, որի առաջնորդ Եվտակտոսը (IV դարակես) հայտնի է օտար աղբյուրներում, (տե՛ս «The Gnostic Scriptures», A new translation with annotations and introductions by Bentley Layton, Doubleday Publ., New York, 1995, էջ 191-198), սակայն նրա մասին ոչինչ չեն հաղորդում մեր պատմիչները:

² Դժվար է այսօր ստույգ ասել, թե 301 թ. նախօրյակին քանի նշանից էր բաղկացած հայկական մեհենագրային համակարգը: Վանի թագավորության ժամանակաշրջանում դրանց թիվը շուրջ 300 էր: Տե՛ս Մովսիսյան Ա., նշվ. աշխ., էջ 261-271: Միջնադարում, երբ այդ նշանները կրկին սկսեցին գործածվել իբրև «նշանագիրք իմաստնոց», դրանց թիվը շուրջ 180 էր: Տե՛ս Աբրահամյան Ա., Հայ գրի և գրչության պատմություն, Ե., 1959, էջ 139-173; Աբրահամյան Ա.Գ., Հայ գիր և գրչություն, Ե., 1973, էջ 201-213, 225-243:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Էդիկ Մինասյան, ԱՐԻԱՍԻՐՏ ՀԱՅՈՒՎՈՒՄ.....	3
Արտակ Մովսիսյան, ԿԱՐԵՎՈՐ ԴԻՏԱՐԿՈՒՄ «ԴԱՆԻԵԼՅԱՆ» ՆՇԱՆԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ.....	7
Հենգել Մանուչարյան, ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՖԵՆՈՄԵՆԸ.....	13
Ֆելիքս Մովսիսյան, ԴԱՎԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՄԱՍԻՆ.....	23
Валерий Тунян, НАЦИОНАЛЬНАЯ ИДЕЯ И НАЦИОНАЛЬНЫЕ СОВЕЩАНИЯ В 1914-1917 ГГ.	41
Արման Եղիազարյան, ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԿԵՑԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ «ԴԱՍԱԿԱՆ» ԵՎ «ՆՈՐ» ՍՓՅՈՒՆՔՈՒՄ (ԼԻՔԱՆԱՆԻ ԵՎ ՈՂ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ).....	50
Սամվել Պողոսյան, ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 1878 Թ.	67
Կարինե Եղիազարյան, Քարմիլե Եղիազարյան, ԱՂԲՅՈՒՐ ՍԵՐՈՔ (ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅՈՒՆԸ).....	81
Սամսոն Քառայան, ԴՐՎԱԳՆԵՐ ՀԱՅ-ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ.....	91
Վահագն Հակոբյան, ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄՅԱՄՆԻԿՅԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅԱՆ ՄԻՆՉԲՈՒՇԵՎԻԿՅԱՆ ՓՈՒԼԸ.....	96
Կարեն Խաչատրյան, Գագիկ Ժամհարյան, ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԳԱՂԹԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԱՌՕՐՅԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (1920-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՍԿԻԶԲ).....	108
Էդուարդ Զոհրաբյան, ՀԱՅ-ԱՂԲԵԶԱՆԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՊԿ ՌԱԶՄԱԿԱՆ ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱԿԱՐԱԿԱՆ ԸՆԿԱՆՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐԶ.....	115
Դավիթ Թինոյան, ՀԵԹՈՒՄ Ա-Ի «ՄՈՆԴՈՒԱԿԱՆ» ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄՈՆԴՈՒԱԿԱՆ ԿԱՅՐՈՒԹՅԱՆ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ.....	121
Էմմա Ստեփանյան, ԱՄԵՐԻԿԱՀԱՅ «ԱՐԱՔՍ» ՀԱՆԴԵՍԸ (1905-1907 ԹԹ.).....	128
Վարդիթեր Աբրահամյան, X-XI ԴԱՐԵՐՈՒՄ ԲՅՈՒՋԱՆԴԻԱՅԻ ԶԱՎԹԱԾ ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԻՎԱՐՈՒՆԵՐԻ ՏԱՐԱԾՔԻ ԵՎ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՃՇՊՐՏՈՒՄ.....	135
Լիլիթ Մելիքյան, ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ.....	143
Գուրգեն Մուրադյան, ՎԱՂՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԻՆԱ ՎԱՇՉԵՎԱՅԻ ՀԵՏԱԶՆՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ.....	148
Դավիթ Կարապետյան, ԱՇՈՑՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԸ XVIII ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՄՆԱՄՅԱԿՆԵՐԻՆ ԸՍՏ ՎԱՆՈՒՇՏԻ ԲԱԳՐԱՏԻՈՆԻԻ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ.....	153
Էդուարդ Հովհաննիսյան, ԴԱՐԱԲԱՂԻ /ԱՐՑԱՆԻ/ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԵԼԻՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ «ԿՈՎԿԱՍԻ ՀՆԱԳՐԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՎԱՎԵՐԱԳՐԵՐՈՒՄ».....	159
Տաթևիկ Մինասյան, ՀԱՅՈՒՎՈՒՆԵՐԻ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱԲՂՈՒՀԱՄԻԴՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՐԳԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻՆ (XIX ԴԱՐԻ ՎԵՐԶ-XX ԴԱՐԻ ՍԿԻԶԲ).....	166
Արամ Խաչատրյան, ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՅԱՍԵՐՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԱՐԾԱՐԾՈՒՄԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎՆԵՐՈՒՄ 1900-1907 ԹԹ.	174
Սուսաննա Առաքելյան, ԲԱՔԿԻ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐԶ.....	185
Նարինե Նուշերվանյան, ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՄԱՅՆԱՊԱՏԿԵՐԸ XIX ԴԱՐԻ ՎԵՐԶԻՆ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ.....	191

Էդուարդ Կեսոյան, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ	196
Աստղիկ Մովսիսյան, ՀՅԴ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳԸ 1920-ԱԿԱՆ ԹԹ.	206
Լուսինե Գրիգորյան, ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԻ ԿՈՄԻՏԵԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ (1964-1985 ԹԹ.)	215
Մելիք Հովսեփյան, ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԻ ԿՈՄԻՏԵԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ (1964-1985 ԹԹ.)	223
Լիլիթ Մատինյան, Հենրիկ Աբրահամյան, ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԾՆՈՒՆԴ	229
Սոնա Մելքոնյան, Էթնիկ ջՏՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱԴՐՔԵԶԱՆՈՒՄ ՀԱՅԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ (1988-1991 ԹԹ.)	237
Դավիթ Զուլհալյան, Կարինե Ասատրյան, ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ 1991-1994 ԹԹ. ԵՎ ՆՐԱ ԱՐԺԵՎՈՐՈՒՄԸ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ	242
Նժդեհ Հովսեփյան, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱԶՄԱՎԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱՔԱՆԱԿԱՆ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐԸ 1991-2001 ԹԹ.	250
Վահե Հովսեփյան, ԽՈՋԱԼՈՒԻ ՈԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ	261
Վարդան Մակիճյան, ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՎ ԱՅԼ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՈՒՆԸ ՔՐԵԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ	269
Գեղամ Ասատրյան, ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ	273
Աննակ Սարգսյան, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 1995-2017 ԹԹ.	281
Гаяне Солахян, ЕВРАЗИЙСТВО В СОВРЕМЕННОМ ИДЕЙНО – ПОЛИТИЧЕСКОМ ПРОСТРАНСТВЕ РОССИИ	289
Ռոման Գազանջյան, ՄՈՆԻՐՈՅԻ ԴՈԿՏՐԻՆԱՆ ՈՐՊԵՍ ԱՄՆ-Ի XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՍՅՈՒՆ	295
Զուլիետա Կճանյան, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՑՈՒՅՑԸ. ԿԱՆԱԴԱԿԱՆ ՈՒՂԻՆ ԵՎ ԼՈՐԴ ԴԱՐԵՄԸ	302
Ժաննա Հարությունյան, ՇԱՌԼ ԴԸ ԳՈԼԻ ԱՖՐԻԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	310
Արսեն Զուլֆալալյան, ԶՐԱՅԻՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ԹՈՒՐՔ-ՍԻՐԻԱԿԱՆ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 20-ՐԴ ԴԱՐԻ 90-ԱԿԱՆՆԵՐԻՆ	316
Георгий Коларов, МАОИЗМ В ЛАТИНСКОЙ АМЕРИКЕ. СЕНДЕРИЗМ, КАК МАОИЗМ КОНЦА XX ВЕКА	322
Անդրանիկ Առաքելյան, ՊԱՂԵՍՏԻՆԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՄԻՋԱՐԱՔԱԿԱՆ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻԶԱԿԵՏՈՒՄ (1992-2011 ԹԹ.)	328
Աշոտ Թովմասյան, ԻՍՐԱՅԵԼԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՈԱԶՄԱՐԴՅՈՒՆԱՔԵՐԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ	333
Արշալույս Տետեյան, ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԱՆԴՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱԴՐՔԵԶԱՆԱԿԱՆ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԵՂԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	337
Միգր Հովհաննիսյան, ԳԻՏԱԿԱՆ ՀՂՈՒՄՆԵՐԻ ԶԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ	344
 ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ	
Ռաֆիկ Նահապետյան, ԳԱՅՈՍ ՊԼԻՆԻՈՍ (ԱՎԱԳ) ՍԵՎՈՒՆԴՈՍԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ	349
Սաակ Տարոնցի, ԱՐԵՎ-ՍԿԱԿԱՌԱԿԻ ՊԱՇՏԱՍՈՒՆՔԸ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԲՐՈՆԶԵ ԳՈՏԻՆԵՐԻ ԶԱՐԴԱՍՈՏԻՎՆԵՐՈՒՄ	355

Արմինե Գաբրիելյան, ԱՐՑԱԽԻ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ԱՆՏԻԿ ԽԵՑԵՂԵՆԻ ՀԱՐԴԱՐԱՆՔԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՓՈՐՁ (Մ.Թ.Ա. I – Մ.Թ. III ԴԴ.)	372
Ռայա Սարգսյան, ՄԻՐԱՔ ԳՅՈՒԴԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԵՂՈՒՄՆԵՐԻՑ ԳՏՆՎԱԾ ՁԻԹԱՃՐԱԳՆԵՐԸ	384
Հասմիկ Հարությունյան, ԿՈՎԿԱՍԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԷԹՆՈԼԵԶԿԱԴԱԿԱՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ (ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ)	388
Արուսյակ Ղարիբյան, ՀԱՅՈՑ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԱՐՔԵՏԻՊԱՅԻՆ ԳԾԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԷՊՈՍՈՒՄ	401
Մերի Ղալլաբյան, ԱԿԱՆԴԱԿԱՆ ՏԻԿՆԻԿԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ. ԵՔՊԹ-Ի ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ ՕՐԻՆԱԿՈՎ	407
Մարինե Հարությունյան, ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ՏԻՊԵՐՆ ԱՐՑԱԽՈՒՄ XVII Դ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ ԵՎ XVIII Դ. ՍԿԶԲԻՆ	411

ԱՐԿԵՍՏ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

Անի Նազարյան, ԳՅՈՒՄՐՈՒ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԸ ՎԻՐՏՈՒԱԼ ՏԻՐՈՒՅԹՈՒՄ	416
Siranuysh Araqelyan, ON A KHACHKAR (STONE CROSS) INSCRIPTION IN ARINJ	423
Garik Atanesyan, NEW INTERPRETATIONS OF PUBLIC FUNCTIONS OF MONUMENTS IN THE YEREVAN’S CONTEMPORARY PUBLIC DISCOURSE	427
Հայկազ Հովհաննիսյան, Հրանտ Ավանեսյան, Սահակ Հովհաննիսյան, Մարինե Մինասյան, ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ ԿԱՅԱՑՈՒՄԸ ՀԱՅ-ՌՈՒՄԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ	434
Հայկուլի Մուրադյան, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔԱՅԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ	441
Ամբատ Հովհաննիսյան, ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՊՈԵՏԻԿԱՆ ԵՎ ՇԵՔՍՊԻՐԻ ՆՈՐՈՎԻ ՄԵԿՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ (ՆՈԹԵՐ ՈՒԼԵԱՄ ՇԵՔՍՊԻՐԻ «ՀԱՄԼԵՏԻ»՝ ԱՐԱՄ ԹՈՓՁՅԱՆԻ ՆՈՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ)	448
Анаит Зурабян, «МОДЕЛЬ ПУТИ» И ЕЁ ОТРАЖЕНИЕ В РОМАНЕ «ЖИЗНЬ И СУДЬБА»	462
Դիանա Հակոբյան, ԵՐԵՄԻԱ ՄԵՂՐԵՑՈՒ «ԲԱՌԳԻՐՔ ՀԱՅՈՑ»-Ը՝ ՀԱՅԵՐԵՆ ԱՌԱՋԻՆ ԸՆԴԱՐՁԱԿ ԲԱՌԱՐԱՆ	467
Arevik Minasián, ANÁLISIS SEMÁNTICO DE LOS REFRANES Y PROVERBIOS CON EL COMPONENTE “PERRO” EN ESPAÑOL Y ARMENIO	473
Mariana Yepremián, ANÁLISIS SEMÁNTICO - COMPARATIVO DE LOS REFRANES Y PROVERBIOS QUE DENOTAN EL CONCEPTO GATO EN ESPAÑOL Y ARMENIO	482
Ասյա Ղարիբյան, ՎՐԱՑԵՐԵՆԻ ՆԱԽԱԲԱՅԵՐՈՎ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐԸ	491
Լիանա Մալխասյան, ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ԱՋԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ	497

ԳՐԱՆՈՍՈՒԹՅՈՒՆ

ՄԵԾԱՐԺԵՔ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅ ԱԶԱՍԱՄԱՐՏԻ ԿԻՆ ՀԵՐՈՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ	503
ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ՌԷՆԱԳՐԱՎ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ	506

ՄԵՐ ԵՐԱՆՏԱԿՈՐՆԵՐԸ

САРКИС СУРЕНОВИЧ КАЗАРОВ	512
--------------------------	-----

ՀԱԿԵՐԺԻ ԶԱՍՓՈՐԴ

ԷԴՎԱՐԴ ԳԱՆՈՒՄՏԻ ԴԱՆԻԵԼՅԱՆ	514
---------------------------	-----

ՀԱԿՈՔ ԲԱՂՂԱՍԱՐԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ. ԿԱՍՏԱԿԱՇԱՏ ԽՄԲԱԳԻՐՆ ՈՒ ԳՐԱԿԱՆԱԳԵՏԸ	516
<i>ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ.....</i>	<i>519</i>